Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի
2024 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ ՈԱԲ 2023-2024 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկման մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

2. ԳՊՀ ՈԱԲ 2025–2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների քննարկման մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

3. ԳՊՀ Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի մշտադիտարկման արդյունքների մասին:

/Զեկուցողներ՝ ֆակուլտետային պատասխանատուներ/

4. Գավառի պետական համալսարանում պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ուսանողների բավարարվածության գնահատման, ինչպես նաև առկա ուսուցման բաժնի ուսանողների կողմից 2023–2024 ուսումնական տարվա դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցումների արդյունքների վերլուծության մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Մ. Նախրատյան/

1. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց Որակի ապահովման բաժնի 2023–2024 ուսումնական տարվա գործողությունների պլանի կատարման մշտադիտարկման արդյունքները: Նշվեց, որ գործողությունների պլանով նախատեսված աշխատանքների զգալի մասն իրականացվել է սահմանված ժամկետներում, մասնավորապես՝ իրականացվել են որակի ներքին ապահովման գործընթացների պարբերական մշտադիտարկումներ, շահակիցների շրջանում հարցումներ և դրանց արդյունքների վերլուծություններ: Միաժամանակ առանձնացվեցին մի շարք գործողություններ, որոնց իրականացումը պահանջում է լրացուցիչ համակարգում և պատասխանատու ստորաբաժանումների համագործակցություն:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին գործողությունների պլանի կատարման շարունակական վերահսկողությունը և փաստերի վրա հիմնված գնահատումը: Առաջարկվեց յուրաքանչյուր եռամսյակ ամփոփել կատարման ընթացքը և անհրաժեշտության դեպքում վերանայել ժամկետներն ու պատասխանատուներին:

Որոշեցին - Հաստատել գործողությունների պլանի մշտադիտարկման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

2. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց Որակի ապահովման բաժնի 2025–2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

Զեկուցողը ներկայացրեց իրականացված աշխատանքների արդյունքները, դրանց ազդեցությունը կրթության որակի ապահովման գործընթացների վրա, ինչպես նաև զարգացման առաջնահերթությունները՝ ՄԿԾ-ների շարունակական բարելավում, շահակիցների ներգրավվածության ընդլայնում, թվային կրթական միջավայրի զարգացում և ներքին որակի ապահովման մեխանիզմների կատարելագործում:

Արտահայտվեցին- Նիստի մասնակիցներն առաջարկեցին զարգացման ծրագրում առանձնացնել նաև շրջանավարտների և գործատուների հետ հետադարձ կապի ուժեղացումը, ՄԿԾ-ի պարբերական վերանայման գործընթացների կատարելագործումը, միջազգային համագործակցության ընդլայնման միջոցով որակի մշակույթի զարգացումը:

Որոշեցին

1. Որակի ապահովման բաժնի 2025–2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

3. Լսեցին - Ֆակուլտետային պատասխանատուները ներկայացրին Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի մշտադիտարկման արդյունքները:

Նշվեց, որ դասընթացների մեծ մասում ապահովվել է ուսումնական նյութերի, հանձնարարությունների և գնահատման տեղեկատվության տեղադրումը: Միաժամանակ որոշ դասընթացներում արձանագրվել են ուսումնական նյութերի թերի համալրման, առանձին դասընթացների ոչ ամբողջական թարմացման դեպքեր:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին, որ էլեկտրոնային ուսուցման միջավայրը լիարժեք աջակցի ուսանողակենտրոն կրթությանը և ապահովի տեղեկատվության մատչելիությունն ու թափանցիկությունը:

Որոշեցին

1. Ֆակուլտետներին հանձնարարել մինչև կիսամյակի մեկնարկն ամբողջությամբ համալրել և թարմացնել դասընթացների էլեկտրոնային տիրույթները:
2. Իրականացնել համակարգի կրկնակի մշտադիտարկում կիսամյակի ընթացքում: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմել ամփոփ հաշվետվություն և ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի քննարկմանը:

4. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ուսանողների բավարարվածության գնահատման, ինչպես նաև դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցումների արդյունքների վերլուծությունը: Վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողները հիմնականում դրական են գնահատել պրակտիկաների կազմակերպումը, մասնագիտական հմտությունների զարգացման հնարավորությունները և դասախոսների մասնագիտական պատրաստվածությունը: Միաժամանակ արձանագրվեցին բարելավման ենթակա ուղղություններ՝ պրակտիկայի բազաների բազմազանեցում, գործատուների մասնակցության ընդլայնում, գնահատման չափանիշների առավել հստակ ներկայացում և ուսանողներին տրամադրվող հետադարձ կապի բարելավում:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին հարցումների արդյունքների կիրառումը ՄԿԾ-ների և պրակտիկաների կազմակերպման շարունակական կատարելագործման գործընթացում: Ընդգծվեց նաև գործատուների և պրակտիկայի ղեկավարների կարծիքների համակարգված ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Որոշեցին

1. Հարցումների արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:
2. Հաջորդ ուսումնական տարում իրականացնել համեմատական վերլուծություն՝ գնահատելով իրականացված բարելավումների արդյունավետությունը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության, արտաքին կապերի և լրատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժիններ, ՈՒԽ, ՈՒԳ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի

2024 թվականի հոկտեմբերի 26-ի

թիվ 2 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2023–2024 թվականների մշտադիտարկման արդյունքների մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Մարիամ Նախրատյան/

2. Համալսարանի բոլոր ստորաբաժանումների՝ 2023–2024 ուսումնական տարում իրականացված աշխատանքների մշտադիտարկման և 2024–2025 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգերի ու գործողությունների պլանների հավաքագրման գործընթացի մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

3. Որակի ապահովման ազգային կենտրոնում 2024 թվականի հոկտեմբերի 14-ին տեղի ունեցած աշխատաժողովի արդյունքների մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

4. ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծության մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Մարիամ Նախրատյան/

1. Լսեցին - Մարիամ Նախրատյանը ներկայացրեց ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2023–2024 թվականների մշտադիտարկման արդյունքները: Նշվեց, որ վերլուծության ընթացքում գնահատվել են հեղինակների աշխարհագրությունը, օտարալեզու հրապարակումների տեսակարար կշիռը:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին գիտական հրատարակությունների որակի շարունակական բարձրացումը, միջազգային տեսանելիության ընդլայնումը և արտաքին հեղինակների ներգրավվածության խթանումը:

Որոշեցին

1. Վերլուծության արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

2. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մշտադիտարկման ընթացքը և 2024–2025 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգերի ու գործողությունների պլանների հավաքագրման աշխատանքները:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում առաջարկվեց ապահովել զարգացման պլանների միասնական կառուցվածքը, սահմանել չափելի արդյունքներ, պատասխանատուներ և կատարման ժամկետներ:

Որոշեցին

1. Մշտադիտարկման արդյունքներն ամփոփել և ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի քննարկմանը:

3. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց Որակի ապահովման ազգային կենտրոնում 2024 թվականի հոկտեմբերի 14-ին կայացած աշխատաժողովի հիմնական թեմաները, քննարկված մոտեցումները և բարձրագույն կրթության որակի ապահովման արդիական միտումները: Ներկայացվեց տեղեկատվություն ներքին որակի ապահովման համակարգերի զարգացման, արդյունքահեն կրթության, արտաքին գնահատման նոր մոտեցումների և շահակիցների ներգրավվածության ընդլայնման վերաբերյալ:

Քննարկեցին - Մասնակիցները քննարկեցին աշխատաժողովում ներկայացված փորձի կիրառման հնարավորությունները ԳՊՀ-ում և առաջարկեցին դրանք ներառել որակի ապահովման ընթացակարգերի վերանայման գործընթացում:

Որոշեցին

Աշխատաժողովի նյութերը տրամադրել ֆակուլտետներին և կառուցվածքային ստորաբաժանումներին:

4. Լսեցին - Մարիամ Նախրատյանը ներկայացրեց առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման հարցման արդյունքների վերլուծությունը: Նշվեց, որ ուսանողները կարևորում են ակադեմիական խորհրդատվության, համալսարանի էլեկտրոնային ծառայությունների, գրադարանային ռեսուրսների և կրթական

գործընթացի կազմակերպման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ֆակուլտետների խորհուրդներին:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության բաժիններ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2024 թվականի նոյեմբեր 1-ի

թիվ 3 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Գավառի պետական համալսարանում առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի) ընթացակարգի» նախագծի քննարկում:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

2. Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի մշտադիտարկման արդյունքների մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան/

3. Գավառի պետական համալսարանի հասարակական պատասխանատվության ուղղությամբ իրականացված աշխատանքների և հետագա զարգացման առաջնահերթությունների մասին:

   /Զեկուցող՝ Արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լ. Թոռչյան/

1. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց «Գավառի պետական համալսարանում առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի) ընթացակարգի» նախագիծը: Ներկայացվեց ընթացակարգի վերանայման հիմքերը, նպատակը, սկզբունքները, իրականացման փուլերը, պատասխանատու ստորաբաժանումների գործառույթները և բենչմարքինգի արդյունքների կիրառման մեխանիզմները: Ընդգծվեց, որ ընթացակարգը միտված է ԳՊՀ գործունեության շարունակական կատարելագործմանը՝ ազգային և միջազգային լավագույն փորձի համակարգված ուսումնասիրման և ներդրման միջոցով:

Արտահայտվեցին - Նիստի մասնակիցներն առաջարկեցին հստակեցնել համեմատական վերլուծության համար գործընկեր բուհերի ընտրության չափանիշները, սահմանել բենչմարքինգի արդյունքների կիրառման և դրանց ազդեցության գնահատման մեխանիզմները:

Որոշեցին

1. Լրամշակել ընթացակարգի նախագիծը՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները և ներկայացնել փաստաթուղթը ԳՊՀ գիտական խորհրդի քննարկմանը:

2. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի մշտադիտարկման արդյունքները: Նշվեց, որ գնահատվել են դասընթացների առարկայական էջերի ամբողջականությունը, ուսումնական նյութերի հասանելիությունը: Վերլուծությունը ցույց տվեց, որ դասընթացների մեծ մասը համալրված է անհրաժեշտ նյութերով, սակայն առանձին առարկաների դեպքում անհրաժեշտ է թարմացնել ուսումնամեթոդական ռեսուրսները և ապահովել ուսանողների համար ամբողջական տեղեկատվություն:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին էլեկտրոնային ուսուցման միջավայրի շարունակական զարգացումը և առաջարկեցին պարբերաբար կազմակերպել դասախոսների վերապատրաստումներ՝ թվային կրթական ռեսուրսների արդյունավետ կիրառման ուղղությամբ:

Որոշեցին

1. Մշտադիտարկման արդյունքները ներկայացնել ֆակուլտետներին և ամբիոններին:
2. Հաջորդ կիսամյակի սկզբին իրականացնել կրկնակի մշտադիտարկում և գնահատել իրականացված բարելավումների արդյունավետությունը:

3. Լսեցին - Լ. Թոռչյանը ներկայացրեց ԳՊՀ հասարակական պատասխանատվության ուղղությամբ իրականացված աշխատանքների ամփոփ պատկերը:

Ներկայացվեցին դպրոցների, համայնքային կառույցների, պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրերը, հանրային իրազեկման միջոցառումները, մասնագիտական կողմնորոշման աշխատանքները և սոցիալական նշանակության ծրագրերում ԳՊՀ մասնակցությունը:

Նշվեց, որ հասարակական պատասխանատվության ծրագրերը նպաստում են համալսարանի հանրային դերակատարության ամրապնդմանը, շահակիցների հետ համագործակցության ընդլայնմանը և համալսարանի դրական հեղինակության ձևավորմանը:

Արտահայտվեցին - Նիստի մասնակիցներն առաջարկեցին ընդլայնել համագործակցությունը մարզի դպրոցների և համայնքային կազմակերպությունների հետ, խրախուսել ուսանողների և դասախոսների մասնակցությունը հանրային ծրագրերին:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ հասարակական պատասխանատվությունը ԳՊՀ 2022-2027 թթ. ռազմավարական զարգացման կարևոր ուղղություններից է և պետք է ներառվի ՈԱ ներքին գնահատման գործընթացներում:

Որոշեցին

Հասարակական պատասխանատվության ծրագրերի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության, արտաքին կապերի և լրատվության բաժիններ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի

Որակի ապահովման բաժնի

2025 թվականի փետրվարի 3-ի թիվ 4 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Գավառի պետական համալսարանում 2024–2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում Որակի ապահովման բաժնի կողմից իրականացվելիք հարցումների պլանավորման մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

2. Գավառի պետական համալսարանում ուսումնական գործընթացից առկա և հեռակա ուսուցման բաժինների ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծության մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

3. ԳՊՀ–դպրոցներ համագործակցության զարգացման ընթացքի մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Ն. Մուրադյան/

4. ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի կազմակերպման աշխատանքների վերաբերյալ:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

1. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց 2024–2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում իրականացվելիք հարցումների պլանը:

Ներկայացվեցին ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների, վարչական անձնակազմի և այլ շահակիցների շրջանում իրականացվելիք հարցումների հարցաթերթերը, դրանցում իրականացված փոփոխությունները: Ընդգծվեց, որ հարցաթերթերի փոփոությունները տեղի են ունեցել՝ հաշվի առնելով ուսանողախան խորհրդի, նախորդ տարիներին իրականացված հարցումների վերլուծությունների արդյունքները, ԳՊՀ ռազմավարական առաջնահերթությունները և կրթական ծրագրերի բարելավման կարիքները:

Քննարկեցին - Մասնակիցներն առաջարկեցին յուրաքանչյուր հարցման համար ապահովել շահակիցների առավել լայն մասնակցությունը և հարցումների արդյունքները կապել բարելավման գործողությունների պլանների հետ:

Որոշեցին

1. Հաստատել 2024–2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի հարցումների հարցաթերթերը:
2. Յուրաքանչյուր հարցման ավարտից հետո կազմել վերլուծական հաշվետվություն և ներկայացնել շահակիցների քննարկմանը:

2. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ դասավանդման որակից առկա և հեռակա բաժինների ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը: Վերլուծության արդյունքում արձանագրվեց, որ ուսանողները հիմնականում դրական են գնահատում դասավանդման կազմակերպումը, դասախոսների մասնագիտական պատրաստվածությունը և կրթական միջավայրը: Միաժամանակ առանձնացվեցին բարելավման ենթակա ուղղություններ՝ կապված ուսումնական նյութերի հասանելիության, էլեկտրոնային ուսուցման հարթակի կիրառման, հետադարձ կապի արդյունավետության և գործնական բաղադրիչի ընդլայնման հետ:

Արտահայտվեցին - Ֆակուլտետների որակի ապահովման պատասխանատուներն առաջարկեցին յուրաքանչյուր կրթական ծրագրի համար մշակել ուսանողների կարծիքների հիման վրա բարելավման գործողությունների առանձին փաթեթ և հետևել դրանց իրականացման ընթացքին:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:
2. Հաջորդ ուսումնական տարում իրականացնել համեմատական գնահատում՝ բարելավումների ազդեցությունը գնահատելու նպատակով:

3. Լսեցին - Ն. Մուրադյանը ներկայացրեց ԳՊՀ–դպրոցներ համագործակցության ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքները: Նշվեց, որ տարվա

ընթացքում կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, համալսարանի ճանաչելիության բարձրացման միջոցառումներ, ինչպես նաև դպրոցների ղեկավարների և ուսուցիչների հետ աշխատանքային քննարկումներ:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին համագործակցության շարունակական զարգացումը՝ հատկապես դպրոցների կարիքների ուսումնասիրության, աշակերտների մասնագիտական կողմնորոշման և ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերի իրականացման միջոցով: Առաջարկվեց համագործակցության արդյունավետությունը գնահատել նաև դպրոցների ներկայացուցիչների հետադարձ կապի հիման վրա:

Որոշեցին

1. Մշակել ԳՊՀ–դպրոցներ համագործակցության միջոցառումների ծրագիր:
2. Իրականացնել դպրոցների ներկայացուցիչների բավարարվածության հարցում և արդյունքները ներկայացնել ՈԱԲ նիստի քննարկմանը:

4. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Նշվեց, որ ներքին աուդիտի նպատակն է գնահատել ՄԿԾ-ների համապատասխանությունը ԳՊՀ ռազմավարությանը, ոլորտային չափորոշիչներին և ՈԱԵՉՈՒ պահանջներին, ինչպես նաև բացահայտել ծրագրերի ուժեղ և բարելավման ենթակա կողմերը: Ներկայացվեցին ներքին փորձաքննության չափանիշները, ժամանակացույցը, ինքնավերլուծության ձևաչափը և գործընթացում ներգրավվող ներքին ու արտաքին շահակիցների շրջանակը:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին, որ ներքին փորձաքննության գործընթացը կրի ոչ թե վերահսկողական, այլ բարելավմանն ուղղված բնույթ: Առաջարկվեց փորձաքննության ընթացքում ուսումնասիրել նաև ուսանողների, շրջանավարտների, գործատուների և դասախոսների կարծիքները, ինչպես նաև գնահատել նախորդ բարելավումների ազդեցությունը:

Որոշեցին

1. Ստեղծել ներքին փորձաքննություն իրականացնող աշխատանքային խումբ՝ ապահովելով ֆակուլտետների և հիմնական շահակիցների մասնակցությունը և ներկայացնել ԳՊՀ գիտխորհրդի քննարկմանը և հաստատմանը:
2. Ներքին փորձաքննությունների և արտաքին փորձագետների եզրակացությունների արդյունքների հիման վրա յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար մշակել բարելավման գործողությունների պլան:
3. Ներքին փորձաքննությունների ամփոփ հաշվետվությունը ներկայացնել ԳՊՀ ռեկտորատին և գիտական խորհրդին:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱԲ, ԳՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումներ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարան

Որակի ապահովման բաժին

2025 թվականի ապրիլի 12-ի թիվ 5 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման ընթացակարգի նախաձգի մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

2. Գործատու–բուհ համագործակցության զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Մ. Նախրատյան/

3. ԳՊՀ պաշտոնական կայքէջի մշտադիտարկման աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Ն. Մուրադյան/

4. ԳՊՀ-ում կրթական ռեսուրսներից դասախոսների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

1. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման ընթացակարգի նախագիծը: Նշվեց, որ ներքին փորձաքննությունը նպատակ ունի գնահատելու կրթական ծրագրերի համապատասխանությունը պետական չափորոշիչներին, ԳՊՀ ռազմավարական նպատակներին և որակի ապահովման ներքին համակարգի պահանջներին: Ներկայացվեցին փորձաքննության փուլերը, գնահատման չափանիշները, փորձագիտական խմբերի ձևավորման սկզբունքները:

Քննարկեցին – Մասնակիցներն ընդգծեցին, որ ներքին փորձաքննությունը պետք է իրականացվի թափանցիկ, փաստահեն և բարելավմանն ուղղված մոտեցմամբ: Առաջարկվեց գործընթացում ներգրավել նաև արտաքին շահակիցների ներկայացուցիչների և ապահովել ինքնավերլուծական հաշվետվությունների միասնական ձևաչափը:

Որոշեցին

1. ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման ընթացակարգը ներկայացնել ԳՊՀ ռեկտորտի և գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը:

2. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց գործատու–բուհ համագործակցության զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ներկայացվեցին գործատուների մասնակցությամբ կազմակերպված հանդիպումները, պրակտիկաների կազմակերպման և շրջանավարտների զբաղվածության խթանման ուղղությամբ իրականացված միջոցառումները: Կարևորվեց գործատուների ակտիվ ներգրավվածությունը ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում:

Քննարկեցին – Մասնակիցները կարևորեցին համագործակցության շրջանակների ընդլայնումը և առաջարկեցին պարբերաբար ուսումնասիրել գործատուների առաջարկները՝ ԳՊՀ ուսանող-պրակտիկանտների գործնականիմտությունները զարգացնելու համար:

Որոշեցին

1. Ընդլայնել համագործակցությունը նոր գործատու կազմակերպությունների հետ:
2. Պարբերաբար կազմակերպել գործատուների մասնակցությամբ քննարկումներ, աշխատաժողովներ:

3. Լսեցին - Ն. Մուրադյանը ներկայացրեց ԳՊՀ պաշտոնական կայքէջի մշտադիտարկման աշխատանքների արդյունքները: Նշվեց, որ իրականացվել է կայքէջի տեղեկատվական բաժինների ուսումնասիրություն, գնահատվել են տեղեկատվության արդիականությունը, ամբողջականությունը և մատչելիությունը:

Արձանագրվեցին որոշ բաժիններում տեղեկատվության թարմացման և կառուցվածքային բարելավման անհրաժեշտությունը:

Քննարկեցին – Նիստին մասնակից ուսանողները առաջարկեցին ապահովել կայքէջում ուսանողական առօրյան ներկայացնող տեղեկատվությամբ՝ դիմորդներին ԳՊՀ գրավիչ տեսանկյունից ներկայացնելու համար:

Որոշեցին

1. Իրականացնել կայքէջի մշտադիտարկում յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում:
2. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ներկայացնել ամփոփ հաշվետվություն Արտաքին կապերի և լրատվության բաժնին՝ ԳՊՀ կայքէջը բարելավելու համար:

4. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ-ում կրթական ռեսուրսներից դասախոսների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը: Արձանագրվեց, որ դասախոսները հիմնականում դրական են գնահատել գրադարանային, տեղեկատվական և էլեկտրոնային կրթական ռեսուրսների հասանելիությունը: Միաժամանակ առանձնացվեցին բարելավման կարիք ունեցող ուղղություններ՝ կապված էլեկտրոնային տվյալների բազաների ընդլայնման, թվային ռեսուրսների համալրման և տեխնիկական աջակցության կատարելագործման հետ:

Քննարկեցին – Մասնակիցներն առաջարկեցին շարունակաբար ուսումնասիրել դասախոսների կարիքները և կրթական ռեսուրսների զարգացման առաջնահերթությունները ձևավորել հարցման արդյունքների հիման վրա:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատին և գիտական խորհրդին:
2. Հաջորդ ուսումնական տարում իրականացնել կրկնակի հարցում՝ իրականացված բարելավումների արդյունավետությունը գնահատելու նպատակով:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱԲ, ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, ֆակուլտետներ, ամբիոններ, գրադարան, այլ կառուցվածքային ստորաբաժանումներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ Ք. Հայրապետյան

Քարտուղար՝ Ն. Մուրադյան

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի
2025 թվականի հունիսի 25-ի թիվ 6
նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Գործատուի կողմից Գավառի պետական համալսարանի շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/

2. Գավառի պետական համալսարանում պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան/

1. Լսեցին - Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյանը ներկայացրեց գործատուների կողմից Գավառի պետական համալսարանի շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը: Նշվեց, որ հարցման արդյունքները վկայում են գործատուների ընդհանուր դրական գնահատականի մասին՝ առանձնացնելով շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը, պատասխանատվության զգացումը և թիմային աշխատանքի հմտությունները: Միաժամանակ կարևորվեց հաղորդակցական, թվային և գործնական կարողությունների շարունակական զարգացումը՝ աշխատաշուկայի արդի պահանջներին առավել համապատասխանելու նպատակով:

Քննարկեցին - Նիստի մասնակիցներն անդրադարձան հարցման արդյունքներին՝ ընդգծելով գործատուների հետ համագործակցության շարունակական զարգացման կարևորությունը: Առաջարկվեց հարցման արդյունքները հաշվի առնել մասնագիտական կրթական ծրագրերի պարբերական վերանայման և բարելավման գործընթացում:

Որոշեցին

1. Գործատուների կողմից շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը:
2. Շարունակել և ընդլայնել համագործակցությունը գործատուների հետ՝ ապահովելով նրանց ակտիվ ներգրավվածությունը կրթության որակի ապահովման գործընթացներում:

2. Լսեցին - Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյանը ներկայացրեց 2024-2025 ուստարվա ընթացքում Գավառի պետական համալսարանում պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը: Նշվեց, որ պրակտիկան նպաստել է ուսանողների տեսական գիտելիքների կիրառմանը, մասնագիտական կարողությունների զարգացմանը և աշխատանքային միջավայրին հարմարվելու հմտությունների ձևավորմանը: Միաժամանակ արձանագրվեց գործնական բաղադրիչի շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը:

Քննարկեցին - Մասնակիցներն ընդգծեցին պրակտիկայի արդյունավետ կազմակերպման կարևորությունը և առաջարկեցին առավել ակտիվ համագործակցել պրակտիկայի բազաների հետ՝ ուսանողների մասնագիտական փորձի ընդլայնման նպատակով:

Որոշեցին

1. Գավառի պետական համալսարանում պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱԲ, ԳՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումներ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**